

րուած սրտեր ունեցող երիտասարդ սերնդի համար-
քնքուշ զգացում ունենալու հետ վսեմով ոգևորուելու
կարիքը կայ:

Pessimist

ՄԵԾ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ ՀԱՍԱՐ
ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Մեծ Յորելեանը, որ հայ մտաւորական կեանքին
տօնը պիտի ըլլայ, ամենուն միտքը գրաւած է, և փա-
փաղ կայ անոր յատուկ նշանակութիւն և փայլ տալ ար-
տասովոր հանգրուան մը կազմելով 1912—13 թուակա-
նէն, որ ինչ ալ ըլլան տարրեր գննութեանց արդիւնքները,
այլևս ճանչցուած է իբր հայ գիրին և հայ տիպին գա-
րադարձը, եթէ ոչ ժամանակագրական ամենախիտ ճըշ-
տութեամբ, գոնէ ընդհանուր ընդունելութեամբ:

Տօնախմբութիւններու և հանդէսներու մէկ մասը
աւօրեայ ցոյցերով կանցնի. ճառ, երգ, ճաշ, երեկոյթ,
յայգահանդէս և այլ նմաններ, որոնք սէտք են իբր ար-
տայայտութիւն և իբր վայելք, բայց հետք չեն թողուլ:
Միւս մասը մնայուն նշաններու վրայ կը հաստատուի,
գիրք, արձանագիրք, կոթող, շէնք և նմաններ: Բայց
վերջին ատեններ սկսած է ընդհանրանալ դրամագլուխ
(ֆօնտ) կազմելու եղանակը, և անոր շահով ոնէ ազգօ-
գուտ ձեռնարկ մը կամ գործ մը ապահովելու փափա-
քը:

Այս անգամ ալ այս տեսակ նախաձեռնութիւններ
տեղ-տեղ սկսած են:

Որչափ կը լսեմ և կը կարդամ, ուսուցչական և ուսա-
նողական նպատակներ կը դրուին նոր դրամագլուխներու
ձեռնարկներուն, և ճիշտ այս մասին է իմ ընելիք աւա-
ջարկը:

Չեմ ուրանար որ ուսուցչութիւն և ուսանողութիւն
կարևոր նպատակներ են. բայց ուրիշներ ալ պէտք է
համաձայնին որ սահմանափակ են, տեղական կերպարան
ունին, անձնական հանգամանք կը կրեն, և միայն որոշ
անհատներ են անոնց նպատակակէտը: Միւս կողմէն երկու-
քըն ալ մեր ազգին մէջ չեղած բաներ չեն, և պարագանե-
րու համեմատ կը տարածուին և կը բարգաւազին հետզ-
հետէ, և որ աւելին է, ընդհանուր ազգութիւնը իբր ուղ-
ղակի նպատակ չունին, ինչչափ ալ ազգը անուղղակի
կօգտուի անոնցմէ:

Այդ մտածմունքներով է, որ ես կը յորդորուիմ
Մեծ Յորելեանին յաւերժացման համար այնպիսի նպա-
տակ մը սահմանել, որ իր տեսակին մէջ եզական ըլլայ,
արժանապէս ձեռք շառնուած կէտ մը շօշափէ, և ազգին
հանրութիւնն ուղղակի յարաբերութիւն ունենայ: Այդ նպա-
տակին համեմատ կուգամ առաջարկել ամեն ժարմինե-
րուն, յանձնաժողովներուն, մասնաժողովներուն և ուրիշ
նախաձեռնարկներուն, որ ամենքն ալ իրենց հաւաքած և

հաւաքելիք դրամագլուխներն իրարու միացնեն, և հան-
գանակութեանց աւելի զարկ տալով, գայն պատկանելի
գումարի մը լրացնեն:

Այդ գումարն ապահով կերպով շահու տրուի, և ա-
նոր արդիւնքով սկզբնաւորութիւն ըլլայ Կաճառ մը կազ-
մելու, Հայագիտական Կանառ մը, որուն նպատակը
պիտի ըլլայ Հայութեան վերաբերեալ ուսումները գար-
գացնել, եղածը կարգաւորել, մասնաւոր գրադոյններն հա-
մախմբել, դժուարութիւնները լուծել, պակասը լրացնել,
կարծիքներն համաձայնեցնել, և նոր ճիւղեր մշակել:

Այդ կէտերն յարմար է հետևեալ չորս բաժանում-
ներու մէջ ամփոփել.

1. Լեզու հին և նոր.
2. Պատմութիւն և Աշխարհագրութիւն.
3. Արուեստ և Արհեստ.
4. Հնութիւնք և Կենցաղ:

Թերևս յարմար էր Կաճառն հաստատել Էջմիածնի
մէջ, իբր Մայր Աթոռ և Մայր Կեդրոն, բայց ներկայ
պարագաներու մէջ նախադասելի կը սեպենք Եզիպտո-
սը, իբր ամեն կողմ ցրուած մասերու փոփոխ յարբերու-
թեանց դիւրին միջավայր մը:

Կաճառին կազմութեան լիակատար ծրագիր մը պա-
տաստելու հոգն առաջիկային թողով, քանի մը նախա-
գիծեր կամ հիմնակէտեր յիշելը բաւական կը սեպենք:

Կեդրոնի մէջ կը հաստատուին իւրաքանչիւր ճիւղին
համար գիւաններ, հմուտ և կարող պաշտօնեաներով, իւ-
րաքանչիւր ճիւղին համար երկու կամ երեք անձ:

Այս պաշտօնները վարձատրել ըլլալուն, կրնար հը-
րաւիրուել յարմարագոյններ որ կողմէն ալ ըլլան:

Կաճառորդներ պիտի որոշուին իւրաքանչիւր ճիւղի
համար զատ-զատ, և պիտի առնուին ամեն Հայերէ է
Հայագէտներէ քոսանց խորութեան սեռի և ազգի և
կրօնի:

Կաճառորդներու համար պայման չէ կեդրոնին մէջ
ապրել, վասնզի ժողովական գումարները տարեկան կամ
երկտարեկան պիտի ըլլան, թէ ընդհանուր կաճառին և
թէ մասնաւոր ճիւղերի հաւաքումներով:

Բուն կաճառորդներ իւրաքանչիւր ճիւղին համար
տասներկու բաւական կը սեպուին, իսկ թղթակից ընկեր-
ներ կրնան ըլլալ անպայման թուով:

Առաջին անգամ հիմնադիրներու անուանումէն
ետքը նոր ընտրութիւններ և նախագահութիւններ կա-
ճառորդներու քուէով կը որոշուին:

Ուսումնասիրութեանց համար կրնան որոշ նիւթեր
ալ սահմանուիլ, առանց մասնաւորները խափանելու, ո-
րոնց վրայ կարծիքներ կը հաւաքուին և լուծումներ կը
տրուին:

Թէ որոշուած և թէ ազատ ուսումնասիրութեանց
գրուածները, և կաճառին գործերը յատուկ պարբերա-
կանով կը հրատարակուին:

Դրամագլուխին արդիւնքով և պատահական նուէր-
ներով և սովորական բաժանորդութիւններով կը հոգա-
ցուին. ժողովներուն, գիւաններուն, պաշտօնեաներուն,

հրատարակութիւններուն և թղթակցութիւններուն ծախքերը:

Ներեալ է նիւթական օգնութիւններ ընել կաճառորդներու և թղթակիցներու, եթէ իրենց ուսումնասիրութեանց համար պահանջուած միջոցները չունին:

Այս և դեռ նկատի չառնուած մանրամասնութիւնները սկզբնական փորձառութիւններէ ալ օգտուելով, հաստատուն կանոնադիր յիտի վերածուին, նոյնիսկ կաճառին ձեռքով:

Ահա այդ հաստատութիւնն է որ մեր տեսութեամբ, Ընդհանուր Հայութեան համար նշանակութիւն կունենայ, անհրաժեշտ եղած, բայց արժանապէս նկատի չառնուած պէտք մը կը լրացնէ, Հայագիտական ուսումնարան գորաւոր զարկ մը կուտայ, ազգային ուսումնասիրութիւններով զբաղողներն իրարու կը մօտեցնէ, և իրօք Մեծ Յօբելեանին մեծութեան համեմատ մեծ գործ մը կը լրլլայ, նպատակին և պարագաներուն մեծութեան համապատասխան:

Ես առաջարկեցի, Խօսքը Մեծ Յօբելեանով զբաղողներուն: Աւելի ընդարձակ բացատրութեանց պատրաստ կը մնամ, եթէ զիտողութիւններու ծանօթանամ:

Մաղ. արքեպ. Օրմանեան

24 մայիս 1913

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

GLXVIII

ՉԼԲ

Շատ շանցած ուսաց և տաճկաց մէջ լինելի պատերազմի ձայներ լսուեցան, որոնք և հեռագհետէ իրականութիւն դարձան:

72 տարեկան փոխարքայ իշխան Վօրօնցօվի առանց այն էլ անառողջ կեանքը՝ հետզհետէ վատանում էր: Եւ նա զգալով, որ պատերազմի տեղութեան ժամանակ իր հիւանդ և ցաւազար դրութեամբ՝ չպիտի կարողանայ Փոխարքայութեան ծանր պաշտօնը, խղճի մտօք, վարել, — թախանձեց և կայսրից 6 ամիս ժամանակաւ արձակուրդ ստացաւ՝ արտասահման դնալու համար:

Կայսրը պատուիրել էր Վօրօնցօվին, որ իր պաշտօնակատարին մանրամասն հրահանգ տայ երկրի կառավարութեան այն եղանակի մասին, որով ցարդ ինքը, իշ. Վօրօնցօվը, ընթացել էր, որպէսզի իր բացակայութեան միջոցին կառավարութեան գործում շփոթութիւն և խաճախութիւն չառաջանան:

Վօրօնցօվի օգնականն էր գեներալ Բեռլ, որին և տուեց Վօրօնցօվը իր հրահանգը:

Այդ ընդարձակ հրահանգում հայերի վերաբերեալ մասում ահա թէ ինչ է գրուած Վօրօնցօվը.

«...Նկարագրելով ձեզ իմ կարծիքը Ռուսիոյ բոլոր ազգերի և հպատակների մասին, և կրկնելով բերանացի ձեզ հաղորդած հայերի հաւատարմութեան և նոյնիսկ մշտնջենական մասին՝ ես պէտք է ասեմ, որ հայերի մէջ մինչև անգամ զինուորական մի քանի դասակարգեր կան, որոնք ամեն բոլոր պատրաստ են օգնել մեզ մեր թշնամիների դէմ: Գալով Ներսէս կաթողիկոսին, — ես պէտք է շեշտեմ որ յանձին նրա, դուք ունիք մի շատ ուժեղ և մշտապատրաստ գործիք Լուսաւորչական հայերին վերաբերեալ ամենատեսակ գործերի և յարաբերութիւնների ժամանակ:

Ներսէսին ես դեռ Յիցիանովի ժամանակից եմ ճանաչում, երբ նա Թիֆլիզի առաջնորդն էր, և ամեն ժամանակ մեծամեծ ծառայութիւններ էր մատուցանում մեզ:

Իր վատթար յատկութիւններով յայտնի՝ հանգուցեալ ենթագնդապետ Իւան Գօրկանովը՝ յաջողեցաւ զբարտեղ Ներսէսին Ֆէլդմարշալ Պասկիեւիչի առաջ, որի ազնիւ հոգին չկարողացաւ բռնել, որ Գօրկանովը իր անձնական շահովն ու վրէժխնդրութեամբն էր ղեկավարուած:

Ներսէսը հեռացուեց Բեսարաբիա իբրև առաջնորդ, և հայոց եկեղեցին զրկուեցաւ մի մարդուց, որ կարող էր նրանում կարգ ու կանոն մտցնել, կարող էր լաւ քահանաներ պատրաստող դպրանոցներ և դպրոցներ բանալ:

Ներսէսից յետոյ եկած բոլոր եպիսկոպոսները՝ ամեն օգտակար հիմնարկութիւնները բարձի թողի արին:

Վերջապէս երբ 1843 թուին էջմիածնի գահակալի համար տեղ բացուեցաւ, — ընտրուեցաւ ու թագաւոր կայսրից հաստատուեցաւ Ներսէսը այս նշանաւոր պաշտօնի մէջ:

Արտասահմանի բոլոր հայերը՝ իրենց գլխաւոր հոգեւորականութեան հետ՝ առաջին անգամ ընդունեցին էջմիածնի կաթողիկոսի առաջնութիւնն ու իշխանութիւնը:

Ներսէսը նախապէս կայսեր ներկայանալուց յետոյ՝ եկաւ այստեղ և թէև այժմ 80-ից աւելի տարիք ունի, սակայն դեռ բաւականին ոյժ ունի՝ եռանդով ազդելու և մեծ օգտակարութեամբ գործելու իր դաւանակիցների համար և Ռուսիոյ ազդեցութիւնը նրանց վրայ տարածելու համար:

Ներսէսը մեծ պատրաստակամութեամբ ինձ օգնում էր այն ամեն մի օգտակար գործում, որին նա կարող կը լինէր մասնակցելու:

Այս բանին դուք ինքներդ էլ չուտով կը համոզուիք: Միայն տայ Աստուած, որ դարձեալ մի քանի տարի երկարի այս օգտակար ծերունու կեանքն ու առողջութիւնը*):

*) АКТЫ. X. кр. 96.